ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱԿԵՐՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ
с.ГЕХАКЕРТ

Գեղակերտի գյուղապետարան հեռ. 093250663 , 0231 63447
Село Гехакерт тел. 093250663 , 0231 63447

N 177

« 05 » << 12 » 2011թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
Պարոն Ա. Ղահրամանյանին

Մեծարգո պարոն Մարզպետ

Ձեզ է ներկայացվում Գեղակերտի գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում ընդունած որոշումներն ու արձակած կարգադրությունները:

Առդիր 5 էջ:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

Մուտք N 11676-11
«07» 12 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<24>> նոյեմբերի 2011թ. N 11 Ա

ՄԱՐԳԱՐԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով,162 –րդ հոդվածի առաջին մասով, 164 –րդ հոդվածի առաջին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1184-Ն որոշման թիվ 1 հավելվածով և հիմք ընդունելով Մարգարիտ Պետրոսյանի դիմումը

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Գեղակերտի բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Մարգարիտ Պետրոսյանին 2011 թվականի դեկտեմբերի 01-ից տրամադրել 2011 թվականի ամենամյա արձակուրդը՝ 22 աշխատանքային օր տևողությամբ:
2. Մարգարիտ Պետրոսյանին աշխատանքի մեջ համարել 2012 թվականի հունվարի 09-ից:
3. Մարգարիտ Պետրոսյանի արձակուրդի ընթացքում հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի << Գեղակերտի բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունները դնել ընտանեկան բժիշկ Աննա Հակոբյանի վրա:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2011թվական24 նոյեմբերի
գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<28>>նոյեմբերի 2011թ. N59

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի թիվ 2 որոշումը և Աշոտ Ալեքսանյանի դիմումը

Որոշում եմ

1. 087-034 ծածկագրի տակ գտնվող «Զրհան» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող 0.2144 քմ արտադրական հողակտորին տրամադրել հասցե՝ Մեսրոպ Մաշոցի փողոց, 92/1:
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2011թվական նոյեմբերի 28
Գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<25>>նոյեմբերի 2011թ. N58

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի թիվ 2 որոշումը և համայնքի բնակիչ Մայմադ Մադաթի Մամեյանի դիմումը

Որոշում եմ

1. 049-015 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողակտորի վրա կառուցած բնակելի տանը տրամադրել հասցե՝ Հովհաննես Թումանյան փողոց, տուն 12:
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2011թվական նոյեմբերի 25
Գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<17>> նոյեմբերի 2011թ. N57-1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ << ԳԱՌՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41 հոդվածի առաջին մասով.

Որոշում եմ՝

1. Ցրտերն ընկնելու կապակցությամբ ժամանակավորապես դադարեցնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի << Գառնիկ Կարապետյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատանքները:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի << Գառնիկ Կարապետյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ջավահիր Ամիրխանյանին 2011 թվականի դեկտեմբերի 01-ից համարել պարապուրդի մեջ :
3 . Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2011թվական նոյեմբերի 17

գյուղ Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<09>> նոյեմբերի 2011թ. N57

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 9 արտահերթ նիստի թիվ 3 Ն որոշումը և Արթին Անտրանիկ-Հարրի Ղազալյանի դիմումը

Որոշում եմ

1. Արթին Անտրանիկ-Հարրի Ղազալյանին տալ շինարարության թույլտվություն:
2. Արթին Անտրանիկ-Հարրի Ղազալյանին՝ շինարարական աշխատանքներն ավարտել 2013 թվականի նոյեմբերի 9-ին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2011թվական նոյեմբերի 09
գ. Գեղակերտ